

R. BOGHOSSIAN, *Le Conflit Turco-Armenien*, Beyrouth, „Altapress“, 1987, 327 p., ill., cartes.

Ռ. ՊՈՂՈՍՅԱՆ, Քուրդ-հայկական կոնֆլիկտը, Բեյրութ, «Ալտապրես» հրատարակչություն, 1987, 327 էջ, լուս., քարտեզ:

Միջհատկապես հայտնի իրավարան և հասարակական գործիչ ղոկտոր Ռուբեն Պոզոսյանը իր գիտական աստիճանները ստացել է Բեյրութի, ապա Փարիզի համալսարաններում: Հատուկ հրավերով աշխատել է ՄԱԿ-ում: Այժմ ղասավանդում է Հալեպի համալսարանում: Սույն գիրքը նրա Երկար տարիների կատարած պրպտումների արգասիքն է:

«Քուրդ-հայկական կոնֆլիկտը» վերնագրով այս մեծածավալ աշխատությունը լույս է տեսել 1987 թ. Բեյրութում: Բաղկացած է ներածական մասից (նախաբան, ներածություն, մեղադրական ակտ), հինգ գլուխներից, հավելվածից և լրացումից: Գրքում զետեղված են մեկ լուսանկար, երկու արաբատառ թուրքերեն հրամանագրեր և շատ կարևոր ու հաղվագուտ ինը քարտեզ: Առաջին իսկ հայացքից երևում է աշխատության յուրահատկությունը, բաղմակողմանիությունը, հարցի ամբողջական ընդգրկումը, և, ամենագլխավորը, դրա քննությունը միջադաշին իրավունքի և քաղաքագիտության տեսակետից: Պոզոսյանը ոչ թե վերատպում է միջադաշին տարբեր օրենքները, համաձայնագրերն ու պայմանադրերը որպես փաստ, այլև մեկնաբանում, ուսումնասիրում դրանք, ցույց տալիս տարբեր երկրների ու կաղմակերպությունների հետադրվածությունն ու տրամադրվածությունը հայկական հարցի և ընդհանրապես նմանօրինակ խնդիրների նկատմամբ:

Գլուխներից առաջինը՝ «Փաստեր» վերնագրով, ունի պատմական բնույթ: Այն նվիրված է հայ ժողովրդի հասարակական-մշակութային կյանքի զարգացմանը հին օրերից մինչև այսօր: Հատուկ ուշադրություն դարձնելով Օսմանյան կայսրության մոռյլ ու դժժան շրջանին, միաժամանակ ցույց է տալիս հայ և ռուս ժողովուրդների բարեկամությունը: Սա նաև միջազգային հանրային իրավունքի համառոտ պատմություն է, որտեղ քննվում է, թե ինչպես են ծագում և զարգանում այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են ներխուժումը, ազգությունը, ազգերի իրավունքը, թե ինչպես է առաջացել Աղգերի լիգան, ապա՝ ՄԱԿ-ը և այլն:

Երկրորդ գլուխն ամբողջությամբ վերցրած իրավաբանական ուղղվածություն ունի: Այստեղ ներկայացվում են պետական իրավունքների նորմերը, տարբեր աղգային փոքրամասնությունների (հրեաներ, պաղեստինցիներ) հետ կապվող հարցերի հենքի վրա մեկնաբանվում են հայկական հարցի ընթացքը, պետության պարտականությունները, իրավունքների շարաշահումները այս կապակցությամբ, թուրքական արդի պետության ինքնարողարացման անօգնական ջանքերը:

«Հայ ժողովրդի իրավունքները» խորագիրը կրող հաջորդ՝ երրորդ, գլուխը նվիրված է հայկական հարցի նկատմամբ տարբեր երկրների (հիմնականում եվրոպական) ընդունած պաշտոնական դիրքորոշմանը, օրենսդրական փաստաթղթերին: Մանրամասն ուսումնասիրվում են տաշածքային ու փոխհատուցումների հարցերը: Հենվելով միջազգային իրավունքի համապատասխան որոշումների վրա, հեղինակը համոզիչ ցույց է տալիս, որ հայ ժողովրդի այս իրավունքները ուժի մեջ են և ոչ թե շուտ թուրքական պետությունը ստիպված կլինի դրանք նկատի ունենալ:

Զորրորդ գլուխը մեղադրվում են մեծ հանցագործության՝ Եղեռնի հեղինակը՝ Քուրդիան և մյուս պատասխանատուները: Այստեղ խոսվում է սուրբա պատերազմի՝ այսպես կոչված ջիհադի մասին, որը մահմեդական ծայրահեղ մուսուլմանական դրսևորումներից է և ըստ Քուրդիայի ամենարդյունավետ և ամենաարագ միջոցը նպատակին հասնելու, այսինքն՝ ազատվելու «գլավուրներից»: Քննվում է նաև այս առթիվ Մուստաֆա Քեմալի ու օսմանյան մտավորականության բռնած ուղին Ռ. Պոզոսյանը առանձին ենթավերնագրերով ներկայացնում է նչրոպական երկրների, ԱՄՆ-ի, Հայաստանի հանրապետության, ինչպես և հետագայում ԽՍՀՄ-ի դիրքորոշումն այս հարցում:

Յոթագլուխը՝ հինգերորդ, գլուխը նվիրված է ԱՄՆ-ի պրեզիդենտ Վիլսոնի ծրագրին և այն հնարավորություններին, որոնցից, ըստ հեղինակի, հայ ժողովուրդը կարող էր օգտվել իր հարցի լուծման համար:

Հետաքրքիր է գրքի հավելվածը, որի շորս հատվածներում տեղ են գտնում միջազգային իրավաբանական կազմակերպություններին հղված հեղինակի նամակները և կարդացած ելույթները, մամուլում հրատարակված նրա հոդվածները: Այս բաժինը ունի փաստագրային-վավերագրական արժեք:

Աշխատության վերջին մասում՝ լրացման մեջ, ամբողջությամբ արտատպված են տարբեր տարիներին ընդունված, միջազգային կարևոր նշանակություն ունեցող իրավաբանական որոշումներ, ինչպես՝ ԱՄՆ-ի պրեզիդենտ Վիլսոնի որոշումը (1916 թ.), Հայաստանի և Ռուսաստանի միջև կնքվելիք պայմանագրի նախագիծը (1920 թ.), «Ազգերի իրավունքների ու պարտականությունների մասին» դեկլարացիան (1948 թ.), «Մարդու իրավունքների մասին» դեկլարացիան (1948 թ.), «Ցեղասպանության ոճիրը կանխարգելու և պատժելու վերաբերյալ» կոնվենցիան (1968 թ.), ՄԱԿ-ի կողմից ընդունված «Մարդկության դեմ հրահրված ոճիրներն ու պատերազմները դատապարտող» կոնվենցիան (1984 թ.), Փարիզում տեղի ունեցած «Ժողովուրդները մշտական դատարանի» Թուրքիային մեղադրող և դատապարտող հանրահայտ դատից (1984 թ.) ծավալուն քաղվածքներ և այլն:

Գիրքն ավարտվում է 1878—1925 թթ. ընթացքում տեղի ունեցած կարևոր դեպքերի ժամանակագրական ցուցակով և մատենագիտական ընդարձակ ցանկով:

Ռուբեն Պողոսյանի այս աշխատությունը հույժ կարևոր նշանակություն ունի, արդիական է և հրատապ: Գրքում տեղ գտած միջազգային իրավագիտական բազմաթիվ հոդվածներն ու օրենքները հայկական հարցը ազավաղել ցանկացողներին մերկացնելու ճիշտ կողմնորոշում են տալիս, լուսաբանում դեռևս ոմանց համար մութ այս խնդիրները: Իրավաբանների ու պատմաբանների համար օգտակար այս գիրքը կհետաքրքրի նաև յուրաքանչյուր մարդասերի:

Ա. Ժ. ՀԱԼԱՋՅԱՆ